ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ և օրհնութեամբ կ'արձանագրենք 1974 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. Տկն. Մարիամ Քէշիշեան, բնիկ Մարաշցի, Պէյրութաբնակ, կը նուիրէ սեղանի ծածկոց մը մէջտեղը խաչով մը և սովորական քարերով:

2. Ալֆրէտ, Ալէ և Կարէ Պողոսեաններու կողմէ մէկական փոքրիկ խաչիկներ՝ մետաղէ. Տկն. Ժէնիկ Աղաճանեան, բնիկ Թեհրանցի կը նուիրէ Նոր Զուղայի ձեռագործ սեղանի ծածկոց մը, չորս կողմերը գրուած. «Անուն Հօր և Որդւոյ, Ամէն»:

3. Տկն. Ռօզա Աղաճանեան կը նուիրէ երկու փոքր խաչիկներ, նիգելէ փոքր կապոյտ քարերով և միջակ խաչ մը կապոյտ պատկերով և Աւետարանի բռնիչ մը:

4. Տկն. Ալիս Սեան, բնիկ Այնթապցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ զոյգ մը աշտանակ, Թէրա Սանթալի գործ, պղնձեայ, Ս. Թորոսի եկեղեցւոյն, զոյգ մը Աւետարանի բռնիչ, կարմիր յատակով, արծաթաթել երիզներով և խաչերով, զոյգ մը խաչի ճերմակ բռնիչներ, դեղնորակ երիզներով:

5. Օր. Հայկանուշ Նալպանտեան, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ Ս. Գլխադրի ճերմակ ձեռագործ սեղանի ծածկոց մը, և քորփուրա մը Ս. Աստուածածնայ Հեթում թագաւորի սեղանին:

6. Պէյրութաբնակ Յակոբ Գոյումճեան՝ Տ. Գիսակ Վարդապետի ձեռամբ կը նուիրէ քորփուրա մը Ս. Յակոբայ Տաճարին:

7. Տկն. Հերմինէ Սիպլեան, բնիկ Մարաշցի, Պէյրութաբնակ, կը նուիրէ սեղանի ծածկոց մը կարմիր յատակով, եզերքները բանուած ոսկեթել ծոպերով:

8. Տկն. Շաբէ Գալայճեան, բնիկ Մարաշցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ սկիհի ծածկոց մը, կարմիր յատակով, ոսկեգոյն փուլերով և ծոպերով և երիզով գործուած:

9. Տկն. Մարիամ Ճանսրզեան, բնիկ Մարաշցի, վանքաբնակ, կը նուիրէ սպիտակ քորփուրա մը Ս. Գլխադրի խորանին:

10. Տկն. Շաբէ Գալայճեան, բնիկ Մարաշցի, Երուսաղէմաբնակ, կը նուիրէ կարմիր յատակով փուլու խաչերով և արծաթեայ եզերքներու ծոպերով երկու խաչի բռնիչներ Ս. Յակոբայ Տաճարին:

ՀԱՅՐԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

պատոսարանի մէջ, հիւպատոսին կողմէ տրուած ընդունելութեան ներկայ եղաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Դիւանապետ Գերշ. Տ. Շահէ Արք.ի:

** Գշ. 1 Ապրիլ.— Եւրոպական Ս. Զատկի տօնին առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, Միաբանութեան անդամներուն ընկերակցութեամբ, շնորհաւորական այցելութեան գնաց Ֆրանչիսկեաններու Գերշ. Կիւսթոտին և Լատիններու Ամեն. Պատրիարքին: Յետոյ, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի, նոյն առիթով այցելեց Պապական Նուիրակին և Անկլիքան ու Արաբ Անկլիքան Եպիսկոպոսներուն: Իսկ Հոգշ. Տ. Հայկասեր Վարդապետ, Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթոլիկ և Բողոքական փոքր յարանուանութեանց ներկայացուցիչներուն:*

** Գշ. 16 Ապրիլ.— Կէսօրին, Իսրայէլի Անկախութեան 27րդ տարեդարձին առիթով, Երուսաղէմի Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քոլլէքի կողմէ Դաւթի Բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեան, Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբիկեան և Տիար Կ. Հինդլեան:*

digitised by A.R.A.R.@